

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Ամերիկահայ Համայնքային Ցաւառիթ Խմորումներ

Գրեց՝ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՅՈՎՆԱՆԵԱՆ

Թիւններէն:

Խոր ցաւով կը տեղեկանանք թէ Թորոնթոյի Ս. Խաչ եկեղեցւոյ հաստատման խնդիրը սեւէ հաստատ եւ հիմնական լուծման չէ յանգած, կը մնայ բամբակ դերձանով կապուած ձգձգողական ընթացքի մէջ: Թորոնթոնակ համայնքը համերատարօրէն կը սպասէ տակաւին իր արդար նպատակներուն իրագործումին, էջմիածնայ Վեհափառէն կամ Մայր Աթոռի Գերագոյն Հոգեւոր Խորհուրդէն, որ պաշտօնական գրով մը քանի մը ամիսներ առաջ լուծումներ առաջարկած էր այս հարցին առնչութեամբ: Այս առթիւ կը տարուինք խորհիլ թէ, այդ ազգանուէր, ազգային եւ եկեղեցական օրէնքներու եւ գործունէութեանց հմուտ, փորձառու եւ մշակուած անձնաւորութիւնները՝ բժիշկներ, ճարտարագէտներ, զանազան մասնագիտութիւններու տիրացած համայնարանականներ, ինչ ազգակներու եւ պատճառներու բերումով առած են այս քայլը եւ որոշած են հիմնել Նիւ Եորքի առաջնորդութեանն անկախ, Թորոնթոյի մէջ ազատ եկեղեցի մը, կապուած Ս. էջմիածնայ:

Այս ցաւառիթ եղելութիւնը մեզ կը յիշեցնէ (8-12) րդ դարերու հայ եկեղեցւոյ իշխանաւորներուն դէմ կատարուած, Պաղտիկեան եւ Թոնդրական շարժումները, որոնց բուն իսկ պատճառը եւ առիթ ստեղծողը եղած էին դարձեալ եկեղեցականները, որոնք հայազգի իշխաններու հովանաւորութեամբ կեղեքումներ, շահագործումներ, գիւղերու եւ արտերու, կալուածներու գրաւումներ կը կատարէին, հարկեր ու ծանր տուրքեր գնելով հայ գիւղացի շինակներն ուսերուն, որոնց մասին գրած էինք «Տեղեկատու»-ի Ապրիլ 79-ի թիւերէն մէկուն մէջ մանրամասնօրէն: Անցնինք մեր նիւթին՝

Հազարէ աւելի Թորոնթո բնակող հայեր, շարժման անցեր, քանիցս դիմումներ կատարել են Նիւ Եորքի Առաջնորդարանին, Արիս Շիրվանեան Սրբազանին — այժմ մեկնած էջմիածին — հանդէպ կիրարկուած անիրաւ տնօրէնութիւններուն համար, որոնք կատարուել են Առաջնորդ Թորոնթ Արք.ի հրամանով, որու կցուած կայ «թեմական խորհուրդ» անուն մը եւս, սակայն այս վերջինը որքան փորձառու է ազգային կամ կրօնական իրաւասութիւններու եւ դատ մը երկկողմանի եւ անաշարժէն լսելու եւ որոշում տալու, այդ ալ կը մնայ կասկածելի եւ խնդրական:

Դատի մը վերջնական որոշումը կամ արդար կիրարկումը, երկու կողմերն ալ անաշարժէն ունկնդրելով է որ կը

կատարուի: Այսպէս, մեր կատարած քննութիւններէն կը յայտնուի Թորոնթո բնակող հայեր, որոնց մեծամասնութիւնը պոլսեցիներ, բազմիցս դիմումներ կատարած են Թորոնթ Արք.ի որոշումներու համար, ինչպէս վերեւ յիշած ենք, սակայն այդ դիմումները մնացել են անպատասխան եւ կամ ձգձգողական դիւանագիտական խօսքերով, կամ զբոսներ են վարդապետներ, ոչ թէ գործնական քայլեր առնելու պաշտօնով, այլ որպէս բանբերներ, մինչեւ որ երկու տարիէ աւելի ժամանակով սպասելէ վերջ, պոլսեցիներ, անհամարեթիւնը ծայր է տուել, կրակը երդիքն ալ լսալիցեր ու վերածել է մոխրակոյտի:

Եւ հազիւ թէ մէկ ամիս առաջ Առաջնորդ Արք.ը եւ առաջնորդարանի խորհրդականները զացել են այդ մոխրացած վիճակին դարման մը գտնելու...

Թէ ինչո՞ւ այդ կրակը տակաւին կայծի վիճակին մէջ եղած չըջանին նկատի չէ առնուած, Առաջնորդը հանգամանօրէն չէ խօսած անձնապէս եւ դարման մը չէ գտած, կը մնայ անլուծելի... Կ'ուզենք մեր յարգելի ընթերցողներուն նկատողութեան յանձնել թէ, նման ցաւառիթ եղելութիւններ ոչ առաջինն են եւ ոչ ալ վերջինը պիտի ըլլան, քանի ժողովուրդը, ժողովուրդին խօսքն ու կամքը անտեսելու տգեղ սովորութիւնը կը յամար մնալ մեր ղեկավար շրջանակներուն մէջ:

Նման ղեկավարներու մենք կ'ուզենք խոնարհաբար յիշեցրնել թէ, ազգին տէրը միայն ժողովուրդն է, գերիշխանութիւնը ժողովուրդինն է. ժողովուրդն է որ կանգուն կը պահէ մեր ազգային կալածանքը իր նուիրատուութիւններով, տուրքով, պէտք չէ արհամարհել եւ ըմբոստացնել այդ տանտէրը:

Այսօր հսկայ Ամերիկայի Մ. Նահանգաց նախագահն անգամ, յաճախ կը կազմակերպէ լրագրական հաւաքոյթներ եւ այդ հարցազրոյցները կը հրապարակուին եւ ժողովուրդը կը գիտակցի անցուղարձերուն, կ'երեւի Առաջնորդարանը շատ աւելի բարձր կը տեսնէ ինքզինքը իր հանգամանքաւորներով եւ ոչ մէկ հաշիւ կու տայ կամ պատասխան լրագրողներուն եւ ընդհակառակը դիրք կը բռնէ հայկական կարեւորագոյն շարքաթափերէն՝ «Արմինիըն Ռիփորթըր»-ի դէմ, եւ անոր մէջ գաղտնիքով իր յայտարարութիւնները ժողովուրդը անտեղեակ կը դարձնէ իր կազմակերպած հանդիսու-

Գաւերորդ դարու տիրող համոզումը պէտք է ըլլայ միշտ «ժողովուրդին հետ եւ ժողովուրդին մէջ» չկայ վերնախաւ, հաշիւ շտուղ. այն ատեն է որ այդ համայնքը աւելի կը փարի իր մեծերուն, արժէք ու յարգանք կ'ընծայէ, քանի կը զգայ ժողովուրդը թէ ինք ալ կը յարգուի իր քուէներով պաշտօնի կոչած անձերէն: Այս սկզբունքին չի հետեւիլ բսկ է «բունակալութիւն»:

Ահաւասիկ այս իրարմէ բարսախներով հեռու մտայնութիւնը, պատճառ կ'ըլլայ պոլսեցիներու եւ ըմբոստացուներու, ինչպէս որ կը պատահին այս վերջերս երկիրներու մէջ եւ պատահած են անցեալին եւս:

Պիտի յիշենք 12-13 տարիներ առաջ Մոնթրէալի եգիպտահայ եւ պոլսահայ միջեւ ծագած անհասկացողութիւնը, որով ի վերջոյ այս վերջինները բաժնուեցան ու կազմեցին Պոլսահայ Միութիւնը եւ առին իրենց սեպհական շէնքը: Առաջնորդ Սրբազանը շատ լաւ գիտէ այս բաժանումին ազգակները, որը Վաչէ Սրբազանն ալ չկարողացաւ կարգադրել:

Մի քանի տարի առաջ, էլյարրոնի (Ն.Ճ.) պատակտուամբ, այս ալ պատահած էր, որովհետեւ Առաջնորդը անձամբ չէր գացած եւ անյապաղ երկու կողմերը լսելով երկու կողմին ալ հաւասար արժէք տալով չէր կարգադրած եւ պատահական բանբերներ, յօնք շինելու տեղ աչքեր ալ հանած էին:

Ցաւալի դէպք մը պատահած է 8-9 ամիս առաջ, Մոնթրէալի Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ վարդապետը Արէտ անուն կանարգէ վաստակաւոր երաժշտապետ դպիր մը, որ այդ վարդապետը մի գուցէ չի ծնած ան կը սպասարկէր եկեղեցիին: Որովհետեւ գացել չապիկ հագել է յուզարկաւորութեան տիկնոջ մը, որ երկար տարիներ ծառայել է էջմիածնական եկեղեցիին, սակայն ամուսինը յուզարկաւորութիւնը կատարել է Անթիլիասական եկեղեցին եւ հրամանաւ Առաջնորդ Թորոնթ Արք.ի այդ դպիրը չապկազուրկ է հոչակուէր առանց ունկնդրելու պատճառները եւ դպիրն ալ անտեղեակ եղած պատիժէն երբ չապիկ հագնելու համար կ'երթան եկեղեցի, այդ կուուագան վրդ. բոլուցքի եւ կիցերու նենգ հարուածներով ուշակորոյս վիճակի մէջ ձգելով յիշեալ դպիրը կը զրկուի հիւանդանոց եւ վարդապետն ալ մեծ քաջագործութիւն մը ըրածի հովերով կը բարձրանայ Ս. Խորան պատարագելու:

Նիւ Եորքի Փոքրամասնութեանց

Համերգ Ի Յիշատակ Մարօ Աճեմեանի



ՆՆԻ ԵՈՒՔ, Ն.Ե.- Եւրջ մէկ տարի ստաջ ամերիկահայութիւնը խոր յուզումի մատնուեցաւ անուանի դաշնակահարուհի Մարօ Աճեմեանի անակնկալ մահով:

Անոր մահէն անմիջապէս ետք, իր յիշատակին նուիրուած կրթաթոշակ մը հաստատուեցաւ Նիւ Եորքի աշխարհահարկային Երաժշտանոցին՝ ճուլիարտի մէջ: Յատուցուող Հոկտեմբեր 25-ին, Երեկոյեան ժամը 8-ին Համերգ մը տեղի պիտի ունենայ Ս. Վարդան Մայր տաճարին մէջ, որուն հասոյթը ամբողջութեամբ պիտի յատկացուի վերոյիշեալ կրթաթոշակի հիմնադրամին: Համերգին իրենց մասնակցութիւնը պիտի բերեն հանգուցեալ դաշնակահարուհիին քոյրը՝ Զուլիա Կարուհի Անահիտ Աճեմեան, դաշնակահար Շահան Արծրունի եւ Ուիլիամ Ալսարոս:

ճուլիարտ Երաժշտանոցի հաստատած կրթաթոշակը պիտի յաւերժացնէ Մարօ Աճեմեանի յիշատակը, որ ոչ միայն մեծ արուեստագէտ մըն էր, այլ նաեւ ազնիւ հայուհի մը, որ իր մասնակցութիւնը կը բերէր ազգային կեանքին, մասնակցելով կրօնական թէ բարեսիրական կազմակերպութիւններուն: Անգնահատելի է յատկապէս Մարօ Աճեմեանի դերը Միացեալ Նահանգներու մէջ հայ երաժշտութեան տարածման եւ ծանօթացման գործին մէջ:

Կատարողական արուեստի մէջ արձանագրած իր նուաճումներուն համար ան բազմիցս արժանացած է բարձր շքանշաններու եւ մրցանակներու:

Համերգի մուտքի գինն է 5 տոլար: Կան նաեւ 20 տոլար եւ 100 տոլար (գեղջի համար) արժող տոմսակներ, որոնց տէրերուն պիտի տրուի Մարօ Աճեմեանի 1946-ին Թաուն Հոլի մէջ ունեցած Համերգի ձայնագրակը: Այս համերգը անկիւնադարձ մը եղած էր ոչ միայն անուանի դաշնակահարուհիին համար, այլ նաեւ համերգի յայտարարին մէջ ներառուած ստեղծագործութեանց երկու հեղինակներուն՝ Ալան Յովհաննէսի եւ Ճան Քէյճի համար, որոնք այն ժամանակ տակաւին համաշխարհային համբաւի չէին տիրացած:

Ապահովելու համար տոմսակները, կը խնդրուի չէքերը ուղարկել հետեւեալ հասցէին:-

Juilliard School—Maro Ajemian Scholarship
P.O. Box 1282, G.P.O.
New York, N.Y. 10001

ս- պատմական, գրական եւ ար-
ի- լեստագիտական գիրքերը
յ- վկայութիւնն էին հայ ժողո-
ր- վուրդի ազգային հարուստ
ն: ժառանգութեան:

ս- Ս. Վարդան գրասայգիին մէջ
ր- յաջորդական երկու օրերուն
ա- ելոյթ ունեցաւ Էթնիք պարա-
ա- խումբեր: Հայկական ժողո-
ր- վրդական պարերով հանդէս
ւ: եկաւ Հայ Բարեգործական
ր- Ընդհանուր Միութեան Նիւ
ն- Եորքի Անդրանիկ պարախում-
ր- բը, որ ե՛ւ իր կատարողական
ր- արուեստով, ե՛ւ իր տարազնե-
ր- բու գունազեղութեամբ արժա-
ւ- նացաւ բազմահազար ներկա-
ն- ներու գնահատանքին:

Կիրակի կէսօրէ ետք ժամը
երեքին Առաջնորդարան ժա-
մանեց Նիւ Եորքի բաղաբապե-
տը՝ Էտուարտ Քաշ, որ Արեւ-
ելեան Թեմի Առաջնորդ Գեր-
Տ. Թորգոմ Աբբ. Մանուկեանի
ընկերակցութեամբ այցելեց
Ս. Վարդան գրասայգին եւ
ունեցաւ հրապարակային
ելոյթ մը: Իր հայանպաստ
արտայայտութեանց մէջ, քա-
ղաքապետը զրուստեց հայ
ժողովուրդի շինարար ոգին,
անոր ապրելու, գոյատեւելու
գերգօր կամբ: Օսմանեան
կայսրութեան կազմակերպած
եղեռնէն մազապուրծ ազատած
հայութիւնը, որ երկիրը որ

սպաստանեցաւ, ոչ միայն
կրցաւ վերապրիլ ու գոյատե-
ւել, այլ նաեւ՝ մեծապէս
նպաստեց այդ ընկերութեան
գործազման ու յառաջաց-
ման, - շեշտեց Քաշ: Այնուհե-
տե քաղաքապետ ամերիկա-
ցի ժողովուրդի անունով իր
շնորհակալութիւնն ու երախ-
տագիտութիւնը յայտնեց
ամերիկահայութեան:

Այս տարուան փառատօնը
յատուկ ուշադրութիւն ընծա-
յած էր լուսանկարչական ցու-
ցահանդէս մը, նուիրուած
աշխարհի բոլոր մանուկնե-
րուն: Այս լուսանկարներուն
մեծ մասը տրամադրուած էին
ՄԱԿ-ի Երեխաներու Օժան-
դակութեան Միջազգային
Հիմնարկին կողմէ:

Ս. Վարդան մայր տաճարին
մէջ տեղի ունեցան զանազան
համերգներ: Դասական եւ
եկեղեցական ստեղծագործու-
թիւններով հանդէս եկան Էթ-
նիքնուազախումբի եւ երգչա-
խումբեր, անուանի երգիչներ
եւ մենակատարներ: Կիրակի
առաւօտեան ժամը 10:00-ին
հայկական Ս. Պատարագ մա-
տուցուեցաւ, իսկ Երեկոյեան
ժամը 6:30-ին՝ էքիմենիք
արարողութիւններ, որոնք
եզրափակեցին երկօրեայ փա-
ռատօնը:

Կի « Ուսման Տաճար »-ին մէջ

քառասուներկու յարկէ բաղ-
կացած եւ կոթական ոճով կա-
ռուցուած գեղեցիկ շէնքին
հիմնարկէքը կատարուած է
1926-ին, նուիրուած է զանա-
զան ժողովուրդներու միջեւ
իրերահասակացողութիւն, յար-
գանք եւ սէր յառաջացնելու
նպատակին՝ մշակոյթի եւ գի-
տութեան միջոցով: Ունէ ժո-
ղովուրդ կրնայ սենեակ մը
ունենալ « Ուսման Տաճար »էն
ներս. խնդրոյ առարկայ սենե-
ակ մը՝ իր ներքին յարդա-
րանքով եւ կարասիներով
պէտք է ցոլացնէ տուեալ ժողո-
վուրդին սեփական ճարտարա-
պետութիւնն ու ինքնայատուկ
ճաշակը: Յարդ տասներինը

նման սենեակներ կան « Տաճա-
ր »էն ներս:

Փիցպուրկի համալսարանի
պատկան մարմինները արդէն
իսկ համաձայն գտնուած են
« Հայկական Ազգային Դասա-
սենեակ »ի մը կառուցումին,
եւ առ այդ Հայ-Ամերիկեան
Ակումբը ներքին հանգանա-
կութեամբ մը արդէն իսկ գո-
յացուցած է գումար մը, որ
պիտի յատկացուի նախնական
աշխատանքներուն: Ակումբը
չուտով պիտի ձեռնարկէ հան-
գանակութեան՝ ամերիկահայ
գաղութին մէջ, պատելով ի
գլուխ հանելու համար այս լաւ
մտածուած եւ օգտակար ծրա-
գիրը:

ԱՄԵՐԻԿԱԶԱՅ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՅԱԽԱՌԻԹ
ԽՄՈՐՈՒՄՆԵՐ

Շարունակուած էջ 12-էն

Եւ արդեօք ի՞նչ պատիժ տնօրիններ է Առաջնորդ Արք.ը այդ կոուազան Վարդապետին, ոչինչ...

Ի՞նչ պատիժ տնօրինուեր է Առնակ Գասպարեան եւ Գալայճեան (վերջինը վարդապետութենէ քահանայ դարձած, որոշումովը Թորգոմ Արք.ի) որոնք ոտնլուայի օրերուն կը շարունակեն կիներուն ոտքերը լուալ, դարաւոր եկեղեցական սովորութիւնները ոտնակոխելով:

«Յո՞ք երթաք քահանայք հայ առաքելական եկեղեցւոյ»: Կը լսենք նաեւ թէ, կան խմորումներ Մոնթրէալի եկեղեցւոյ համայնքին մէջ, նաեւ կազմուած է Նիւ Եորքի մէջ հայ եկեղեցիներու միութեան մարմին մը ականաւոր անձերով, ելք մը գտնելու պառակտեալ վիճակին եւ ժողովներ կը գումարէ ամէն ամիս Մանհատթընի Բրինս ձորճ պանդոկին մէկ սենեակը:

Հայերէն Գրամբեհեցայ

(Նոո Ստացուած)

... րենց անապահով վրձակո՞ւմ ու
... անապահով դարաւոր երկիրը, բարբերու անկումը, եւ
... կեանքի ապահովութիւն կը փնտո՞ւնէին առեւարական գծով արե-

Փարիզի Հայկական Համագ

Շարունակուած էջ 14-էն

րով», - շեշտեց ան եւ ապա Սփիւռքը նման-
ցուց մեծ օղակայանի մը, ուրկէ թոխք
կ'առնեն հակոտնեայ ուղղութիւններով
միայն: Համագումարը «հսկիչ աշտարակ»ը
պիտի հանդիսանայ, բացատրեց երիտասարդ
վարդապետը, որ պիտի համակարգէ մեր
բոլոր ճիգերը: «Հայ դատը պահանջելու
համար սփիւռքահայութիւնը պէտք է ապրի, -
շեշտեց ան, - հայ դատը կը մոռցուի Սփիւռքի
մահով»:

Կոանեան վարդապետ շեշտեց նաեւ տնտե-
սական ուժ դառնալու կարեւորութիւնը:
«Տնտեսական ուժը անցագիր մըն է, որ մեր
առջև կրնայ բանալ բոլոր գոցուած սահման-
ները», - ըսաւ ան: Եկեղեցին ունի իր տնտե-
սական ուժը, մինչ կուսակցութիւնները հա-
զիւ իրենց պէտքերը կրնան ուս-

ժողովուրդը իր
սական ուժը որ
շկարենայ իրակ
րը:

Համագումարի
քին էլոյթ ունեց
Ռմանք յատուկ կէ
գումարի առանցք
Ջազրութիւնները
յութեան հետ միայ
ազդել Սովետական
որ արդէն իսկ հայր

Համագումարի կ
արուեստը նաեւ թ
թուրք դիւանագէտ
հայկական ահաբեկ
մասին: Այս ա